Funded by the European Union

ԱՊԱԳԱՆ ԱՅՍՕՐ Հայաստանում ժողովրդավարության խորացման համար կանանց, երիտասարդների և երեխաների դերի հզորացում (2020-2022)



Իրականացման ժամանակահատված: 01.01.2020 - 30.11.2023

ԱԼԳ երկրներ:

Armenia

Ընդհանուր բյուջե: € 3 100 000

Իրականացնող կազմակերպություն(ներ):

UNITED NATIONS CHILDREN'S FUND, UNITED NATIONS DEVELOPMENT PROGRAMME, United Nations Population Fund (UNFPA)

Նախագծի նկարագրություն:

«ԱՊԱԳԱՆ ԱՅՍՕՐ» ծրագիրը կոչված է նպաստելու Հայաստանում ժողովրդավարության ամրապնդմանը՝ կանանց դերի հզորացման, հնարավորությունների ընդլայնման, իրավունքների առաջխաղացման, գենդերային հավասարության խթանման, երիտասարդների և դեռահասների մասնակցության ամրապնդման, հասարակության բոլոր հատվածներում ներգրավվածության ապահովման և կառավարության հաշվետվողականության և թափանցիկության մեխանիզմների հետագա ընդլայնման միջոցով: Նախագծը ներառական է և ուղղված է լինելու 7 տարեկանից փոքր երեխաներին, խնամակալներին և ուսուցիչներին, աղջիկներին և տղաներին, կանանց և տղամարդկանց և իրականացվելու է Հայաստանի 5 մարզերում: Որոշ գործողություններ կիրականացվեն ավելի լայն՝ ազգային մասշտաբով, մինչդեռ մյուսները կկենտրոնանան մեկ կամ առանձին մարզերում: Ծրագրի հիմնական շահառուների շարքում կընդգրկվեն կանայք, երեխաներն ու երիտասարդները, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձինք:

Ակնկալվող արդյունքներ:

«Կառավարության նկատմամբ վստահության բարձրացում» բաղադրիչը կխթանի բաց կառավարումը և ավելի լայն քաղաքացիական մասնակցությունը: Այն հիմնվելու է Հայաստանում բաց կառավարության բարեփոխումների պատմության վրա՝ ընդլայնելով հաշվետվողականությունը և ներգրավելով նոր դերակատարների: Ծրագիրն ապահովելու է, որ այդ նախաձեռնությունները հասարակության բոլոր հատվածների համար լինեն ներառական և հասանելի: Ծրագիրը կնպաստի Հայաստանի բաց կառավարման գործողությունների 2018-2020 թվականների և գալիք տարիների ծրագրի իրականացմանը՝ ապահովելով Հայաստանում կանանց և տղամարդկանց և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կողմից դրա իրականացման վերահսկողությունը: Սա իրականացվելու է հանրային ծառայությունների վերաբերյալ հետադարձ կապի առցանց օղակների ներդրման, ինչպես նաև հասարակության բոլոր շերտերի ակտիվ նախաձեռնողականության խթանման միջոցով:

«Քաղաքացիական ներգրավվածության խորացումը Հայաստանում» բաղադրիչը միտված է ընդլայնել մասնակցային ժողովրդավարության ըմբռնումը և որպես ակտիվ քաղաքացի ներգրավվելու գործիքակազմը՝ քաղաքացիներին տալ հնարավորություն տեղեկացված լինելու ազգային և տեղական ինքնակառավարման գործընթացների, ներառյալ քաղաքական և ազգային բյուջետային որոշումների կայացման գործընթացի հիմնական ասպեկտների վերաբերյալ, ինչպես նաև աջակցել հաշվետվողականությանը ազգային և տեղական մակարդակներում: Այս բաղադրիչի միջոցով հուսով ենք ապահովել, որ քաղաքացիները և քաղաքացիական հասարակությունը, այդ թվում՝ 12-ից 18 տարեկանները, իրենց գիտելիքը և տեսակետները տրամադրեն կառավարությանը քաղաքականության մշակման և բարեփոխումների իրականացման գործընթացում:

Գենդերային հավասարության խթանման և կանանց քաղաքացիական մասնակցության ամրապնդմանն ուղղված գործողություններ բաղադրիչը համայնքներում վաղ մանկական կրթության և խնամքի